ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«__»_____2022թ. **N_____-Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 46-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 301-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ և 37-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի «Երևանի քաղաքապետին կից, Երևանի քաղաքային համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» N 46-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Որոշման նախաբանում ««Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետին և 84-րդ հոդվածի 1-ին մասին» բառերից հետո լրացնել «, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետին» բառերը:

2) Որոշման հավելվածում՝

ա. 4-րդ կետի 2.1-ին ենթակետը ուժը կորցրած ճանաչել.

բ. 6-րդ կետում «6.1-րդ կետով» բառերը փոխարինել «6.1-ին և 6.3-րդ կետերով» բառերով.

գ. 6.1-ին և 6.2-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ.

«6.1. Սույն կարգի 4-րդ կետի 7.1-ին ենթակետում նշված դեպքում խորհրդի անդամներին իր որոշմամբ 1 տարի ժամկետով նշանակում է Երևանի քաղաքապետը, իսկ խորհրդի կազմավորման և գործունեության կարգը, լիազորությունները սահմանում է Երևան քաղաքի ավագանին՝ ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետով:

6.2. Սույն կարգը կիրառելի է սոցիալական աջակցության տրամադրման խորհրդի նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ սույն կարգի 6.1-ին կետում նշված որոշումներով:».

դ. լրացնել նոր 6.3-րդ կետ.

«6.3. Քաղաքաշինական խորհրդի անդամներին իր որոշմամբ, 2 տարի ժամկետով, նշանակում է Երևանի քաղաքապետը հետևյալ մարմինների առաջարկած թեկնածուներից՝

1) ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան՝ 4 անդամ,

2) Հայաստանի ճարտարապետների պալատ՝ 6 անդամ,

3) Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե՝ 2 անդամ,

4) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ 1 անդամ,

5) Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն՝ 1 անդամ,

6) «Հայնախագիծ» ԲԲ ընկերություն՝ 2 անդամ,

7) Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ՝ 3 անդամ:

8) Երևանի քաղաքապետի հայեցողությամբ քաղաքաշինական ոլորտի մասնագետներ:».

ե. 7-րդ կետում «նշանակումը Խորհրդի» բառերից հետո լրացնել «(բացառությամբ Քաղաքաշինական խորհրդի)» բառերը.

զ. 8.1-ին կետում «ընթացքում Երևանի քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում տեղադրված հայտարարության հիման վրա, սույն կարգի 7-րդ կետով սահմանված կարգով» բառերը փոխարինել «ընթացքում՝ սույն կարգով սահմանված կարգով» բառերով.

է. 10-րդ կետից հանել «, ընդ որում՝ Խորհրդի նախագահի տեղակալ կարող է լինել Երևանի քաղաքապետի տեղակալը կամ Երևանի գլխավոր ճարտարապետը կամ Երևանի քաղաքապետի խորհրդականը կամ օգնականը կամ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վարչության պետը, իսկ քարտուղար՝ խորհրդի յուրաքանչյուր անդամ (համաձայնությամբ)» բառերը:

2. Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի «Երևանի քաղաքապետին կից հասարակական կարգով գործող քաղաքաշինական փաստաթղթեր ստանալու վերաբերյալ ներկայացված հայտերի ուսումնասիրության խորհրդակցական խորհրդի կազմավորման և գործունեության կարգն ու լիազորությունները սահմանելու մասին» N 301-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչել:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ ամսվա ընթացքում Երևանի քաղաքապետին կից ձևավորված քաղաքաշինական խորհրդի գործունեությունը դադարեցվում է և այն ձևավորվում է սույն որոշման պահանջներին համապատասխան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

«__»_____ 2022թ.
ք. Երևան

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 46-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 301-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առաջարկվող կարգավորման բնույթը.

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N 46-Ն որոշմամբ սահմանված են Երևանի քաղաքապետին կից, Երևանի քաղաքային համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումները, ձևավորման և գործունեության կարգը:

Հիշյալ որոշման հավելվածի (այսուհետ նաև՝ Հավելված) 4-րդ կետով նախատեսված է, որ «(…) Երևանի քաղաքապետին կից ձևավորվում և գործում են հետևյալ Խորհուրդները. *1) համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման, 2) քաղաքաշինական,* ***2.1) քաղաքաշինական փաստաթղթեր ստանալու վերաբերյալ ներկայացված հայտերի ուսումնասիրության****, 3) շրջակա միջավայրի պահպանության, 4) առևտրի և ծառայությունների, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման, 5) առողջապահության, 6) սպորտի և առողջ ապրելակերպի, 7) սոցիալական պաշտպանության, 7.1) սոցիալական աջակցության տրամադրման, 8) կրթության, 9) մշակույթի, 10) զբոսաշրջության, 11) երիտասարդության հարցերի:*

Հավելվածի 6.1-ին և 6.2-րդ կետերով նախատեսված է, որ՝ (…) *նույն կարգի 4-րդ կետի 2.1-ին և 7.1-ին ենթակետերում նշված դեպքերի անդամներին իր որոշմամբ 1 տարի ժամկետով նշանակում է Երևանի քաղաքապետը, իսկ* ***խորհուրդների կազմավորման և գործունեության կարգը, լիազորությունները սահմանում է Երևան քաղաքի ավագանին՝ ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետով: Նույն կարգը կիրառելի է քաղաքաշինական փաստաթղթեր ստանալու վերաբերյալ ներկայացված հայտերի ուսումնասիրության և սոցիալական աջակցության տրամադրման խորհուրդների նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ սույն կարգի 6.1-ին կետում նշված որոշումներով:***

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետը և Հավելվածի կարգավորումները՝ 2020 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունվել է Երևան քաղաքի ավագանու N 301-Ն որոշումը, որով կարգավորվել են Երևանի քաղաքապետին կից հասարակական կարգով գործող ***քաղաքաշինական փաստաթղթեր ստանալու վերաբերյալ ներկայացված հայտերի***

ուսումնասիրության խորհրդակցական խորհրդի կազմավորման և գործունեության կարգն ու լիազորությունները:

Ինչպես վերոգրյալ կարգավորումներից պարզ է դառնում՝ ներկայումս գործում են *քաղաքաշինության ոլորտում գործունեություն իրականացնող երկու խորհուրդներ՝* ***քաղաքաշինական խորհուրդը և քաղաքաշինական փաստաթղթեր ստանալու վերաբերյալ ներկայացված հայտերի ուսումնասիրության խորհուրդը***: Հիշյալ խորհուրդների լիազորությունները և վերջիններիս գործունեության ոլորտի շրջանակը գործնականում նույնանում են, ինչն էլ հանգեցնում է հիշյալ խորհուրդների ոչ արդյունավետ գործունեությունը, այդ թվում նաև՝ մեկ հարցի շուրջ իրար հակասող դիրքորոշումների առկայությանը:

Հիշյալ խնդրի կարգավորման նպատակով անհրաժեշտություն է առաջացել Հավելվածի 4-րդ կետում կատարել փոփոխություններ և ուժը կորցրած ճանաչել Հավելվածի 4-րդ կետի 2.1-ին ենթակետը, որով սահմանվում է, որ ***Երևանի քաղաքապետին կից ձևավորվում և գործում է քաղաքաշինական փաստաթղթեր ստանալու վերաբերյալ ներկայացված հայտերի ուսումնասիրության խորհուրդը:***

Առաջարկվող կարգավորմանը համապատասխան Նախագծով առաջարկվում է փոփոխություններ կատարել նաև Հավելվածի մյուս կարգավորումներում՝ նպատակ ունենալով նպաստել քաղաքաշինական խորհրդի արդյունավետ գործունեությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ N 1

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 46-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 301-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N 46-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի N 301-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունումը այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ N 2

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 46-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 301-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N 46-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի N 301-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունումը Երևան քաղաքի բյուջեի եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի առաջացնում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ